չէին տալիս, վախենալով, որ հացը կպակսի, աղը կկորցնի իր համը և մագիկ ուժը, կրակը՝ իր զորությունը: Ինչպես հետո կտեսնենք, հավատում էին, որ դրանք տունը և մարդկանց պահում էին fաշկէրից, որոնք արթուն են, մանավանդ, գիշերները: Գիշերը պետք էր խույս տալ գետի, վտակի, աղբյուրի մոտից անցնելուց—չլինի՞ թե fաշկէրը քեզ քարշ տային և խեղդեին ջրի մեջ:

Շատ հաճախ գյուղերում պատմում էին, որ այս ինչ մարդը գիշերը տուն վերադառնալիս հանդիպել էր հարսանիքի: Մեծ ամբոխով, զուռնա-դավալով, պար ու երգով հարսանիքը եկել էր դիմացը: Դա fաշկէրի հարսանիքն էր լինում, որով նրանք աշխատում էին իրենց մեջ գրավել մարդուն: Այդ հարսանիքն անշուշտ ոչ թե fաշկէրի ամուսնության ծես էր, թեև ենթադրություն կար, որ fաշկէրն էլ իրար հետ ամուսնանում էին հարսանիք կատարելով և մարդկանց պես բազմանում: Դա մի խորամանկ միջոց էր մարդուն իրենց մեջ քաշելու, քանի որ գյուղական հարսանիքին, ինչպես վերը նկարագրվեց, հրավիրում էին ամբողջ գյուղն և ամեն մեկն անարգելք մտնում էր ճարսրնեfավօրնէրի մեջ և նույնիսկ իր բարոյական պարտքն էր համարում հարսանիքին ներկա գտնվել: Ուստի վերադարձող գյուղացին հենց հետաքրքրությունից կխաբվեր ու կուզենար միանալ ճարսրնեfավօրնէրին՝ fաշկէրին:

Տան մեջ ամեն ինչ ենթարկված էր fաշկէրից վնասվելու վտանգին՝ և՛ խմորը, և՛ պանիրը, և՛ պատրաստված կերակուրը, և՛ ձիուն տրվող կերը, և՛ ամանները, բայց նամանավանդ ինքը՝ մարդը, որի հիվանդությունը fաշկէրից էր առաջանում, առավելապես մանուկներինը: Նրանցից էր ծանր կամ անհաջող ծննդաբերությունը, ծննդաբերությունից հետո՝ հիվանդությունը, երեխաների կօխվելը, նույնիսկ արևի և լուսնի խավարումը: Չէ՞ որ կարծում էին, որ fաշկէրն են նրանց վրա հարձակվում և իրենցով նրանց ծածկում: Քաշկէրը առավելապես թշնամի էին այն ամենին, ինչ որ շաղկապված էր նոր կյանքի ծագման հետ: Հարսանիքին նրանք ձգտում էին ամեն պատեհ առիթից օգտվել ամուսնացող զույգին վնասելու համար: Նրանց վտանգից պաշտպանելու համար մրկրոնէրը շրջապատում էին հարս ու փեսին՝ ձեռներին վառած մոմերի կրակով: Եկեղեցուց տուն վերադառնալիս հարսանիքը գնում էր ոչ նկած, այլ ուրիշ ճանապարհով, որպեսզի առաջին ճանապարհին դարան մտած և հարսանիքի թափորին սպասող fաշկէրից խույս տան:

Մրնելուց հետո ճարսրնեfատուն ներս մտնողն ասում էր ոչ թե պարիգուն՝ բարի իրիկուն, այլ միշտ պարիլուս՝ բարի լույս, անշուշտ, որպեսզի fաշկէրը չիմանային, թե գիշերը սկսվել էր, չզարթնեին ու չաշխուժանային:

Քաշկէրը վխտում էին երկունքի ցավով բռնված կնոջ շուրջը և ամեն կերպ ձգտում էին նրան մահ պատճառել: Տատմէրը նրանց հարձակումն արգելելու համար շամփուրով գծում էր օդի մեջ կամ գետնին, հաճախ նաև ձեռքին ածուխ բռնած, ծննդկանի շուրջը օղակ կամ գետնին օղակաձև ձգում էր չվանը՝ պարանը, մեծ մասամբ այծի մազից՝ ղազիլից հյուսած[110]: Ապա այսպիսի օղակով պաշտպանվում էր և արդեն աղաուված ծննդկա-

---

110 Այսպիսով, այծի մազին հատկացվում էր հատուկ զորություն: Այծը մեր երկրում ընտելացված էր ոչխարից առաջ, և պետք է կարծել իր տնտեսական նշանակության շնորհիվ թե՛ ինքը, և թե՛ իր պատկերը ստացել են fաշկէրին վանելու զորություն: Դրանով պետք է բացատրել այն, որ այծի արձանիկների հաճախ ենք պատահում պեղումների ժամանակ. ինչպես և այն այծիկը, որը ամրացրած էր Սևանա լճի ավազանում, դամբարանի մեջ հայտնաբերված սայլի լուծի վրա: (Հայաստանի պետ. պատմ. թանգարան): Արդյոք նույնպես լեռներում չար ոգիներին քշելու համար չէի՞ն գծվում իծագրերը: